



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10633

658

7-39

51
p. 1038

150

2002

ԱՌԱՋՆՈՐԳ

ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ

ԿԱՄ

ՏԱՐԵՐՔ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

Պատմութիւն վաճառականութեան եւ Ուսումնասիրութիւնը վաճառականութեան ամէն ճիւղերուն վրայ. — Առեւտրական Օրէնսգիտութիւն, Աշխարհագրութիւն, Տնտեսագիտութիւն. — Վաճառագիտութիւն. — Թղթակցութիւն Հայ. Տանկ. Գաղ. եւ Անգլ. լեզուներով. — Արհեստից եւ արհեստական նոր զիւտերու վրայ ծանօթութիւններ. — Առեւտրական, սակարանական եւ պանքայի հաշիւներ եւայլն.



Հասր Ա. — Տէր Գ.



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1901

Գ Ն Ա Հ Ա Տ ՈՒ Մ

[Տ. Իրիգոր Զօհրապ, որ սաղանդաւ որ գրագէտ մը եւ ներհուն իրաւաբան մը ըլլալէ զաս, գերազանցապէս գործի մարդ (homme d'affaires) մ'է, հանեցաւ, հետեւեալ նամակով, գնահատել այս համետս հրատարակութիւնը, որուն կը յօժարի նուիրել իր բանկագին ու պատուաբեր աշխատակցութիւն: Պիտի ջանանք բոլորի արդարացնել այս գնահատում:]

4. Պոլիս, 23 Դեկտ. 1900

Մեծապատիւ Տէր

Ուշադրութեամբ կարդացի «Առաջնորդ Վանաւականաց» անունով ձեր պատրաստած գրքին երկու Տէրերը. զոր ինծի խրկելու պատիւը շնորհէի:

Առանց վերապահութեան կրնամ ըսել որ այս աստիճան գործնական ընթերցումով յղացուած գիրք մը չէի տեսնուած: Բուն առեւտրական կեանքն է որ կը տեսնուի հոն; տեսակ մը անկախութեան մեջ, որ սակայն անոր իսկութիւնն է:


Հետեւապէս, ասանկ հրատարակութիւններու մասին պահանջող ու դժուարահան ըլլալու չափ զձեզ կը շնորհաւորեմ: Եւ որպէս զի գործով ալ ցուցուցած ըլլաւ թէ ո՛րչափ գնահատեցի ձեր աշխատութիւնը, սիրով կ'ընդունիմ Բառագիրտերնոյ համար «Անանուն ընկերութիւն» բառին իմաստն ու բացատրութիւնը գրելու մասին ինծի ըրած առաջարկութիւննիդ:

Անանուն ընկերութիւնը, որ ամեն օր աշխատիտելու, բարեփոխուելու վրայ է եւրոպայի մեջ, նոյն իսկ դրամագիրքի պատմութիւնն է ինկնիւն, անհունապէս մեծին արտադրումը՝ անհունապէս փոքրին, ճիշդ՝ տեղեկութիւն կազմութեամբ պէս: Անոր mécaniqueը կ'ուզէ ինչ եւ անձով սահմանի մը ներածին չափ. պատրաստ եւ ասիկայ բացատրելու:

Գ. ԶՕԿԵՊ

Առեւտրական Բառարան

«Առաջնորդ վաճառականաց»ի Ե. Տեարէն սկսեալ պիտի հրատարակենք «ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ» մը վաճառականութեան, ճարտարարուեստի եւ գրամատուներու վրայ գուտ գործնական ծանօթութիւններով: Գործի մարդիկ անոր մէջ պիտի գտնեն իւրաքանչիւր վաճառքի սահմանը, ուր տեղէն ելլելը, նախանիւթերը, պատրաստութեան եղանակը, կեղծերը, զանազան երկիրներու մէջ արտադրութեան եւ սպառման կարեւորութիւնը, առեւտրական արտաքին շարժումը, գիներու փոփոխումը եւն: Նաեւ թուրքիոյ եւ զանազան երկրաց վաճառաչաճ քաղաքներու բնակչութիւնը, դժուար ճարտարարուեստները, արտածումներն ու ներածումները, գրամատուները, առեւտրական հաստատութիւնները, առեւտրական սովորութիւնները, վարկի պայմանները, նաւահանգստի օրէնքները, չափերը, կշիռները, գրամները եւն: Առեւտրական կեանքի պատրաստուող ուսանողք այդ Բառարանին մէջ պիտի գտնեն պատմական եւ օրէնսգրտական ընդարձակ ծանօթութիւններ այն ամէն բաներու վրայ որք կը գործածուին վաճառականութեան մէջ, ինչպէս սեւեթիս, բեռնագիր, անանուց ընկերութիւն, ֆոնանսիզ ընկերութիւն եւն. եւն.:



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Բիւզանդական վաճառականութիւնը

Միջին Դարու մէջ (518—1300)

Հին ատեն, Հռոմայական կայսրութեան օրով, Հռոմի (Հռոմայական աշխարհի) ու Մայր Արեւելքի միջեւ վաճառականութիւնը կ'ըլլար մէկ կողմէն Կարմիր ծովով, Ատրիքով եւ միւս կողմէն Ոքսոս գետով, Կասպից ծովով եւ Սև ծովով: Կ. Պոլսոյ հիմնարկութենէն ետքը, իր աշխարհագրական գերազանց դիրքին պատճառաւ, նոր մայրաքաղաքը Բիւզանդական վաճառականութեան կեդրոն դարձաւ: Իր առեւտրական հրապարակը նշանաւոր էր Չինական շերամով եւ Հնդկաստանի նպարներով ու համեմներով: Դրանցիկի գործը կը կատարէին Պարսիկները, որոնք կերպով մը Հելլենացած էին: Մծրին, Կալինիկէ ու Արտաշատ այն քաղաքներն էին ուր Յոյները Պարսից հետ արեւմտեան ապրանքները կը փոխանակէին արեւելեանին հետ: Յոյն վաճառականներ այդ գաղաքներէն դէպի ներս չէին կրնար յառաջանալ: Երբ Յոյները Պարսից հետ պատերազմ ունենային, արեւելեան վաճառքներն եթովպիայէն¹⁾ կ'ստանային: 532ին Յուստինիանոս եթովպիոյ թագաւորին դեպքան դրկեց մեռաքսի առեւտուրը դիւրացնելու համար: Մեռաքսի շտեմարանն այն ատեն Տապրոբան—Մէլլան կոչին էր, Պարսիկներուն թեւարկութեան ասկ: Պարսիկները խոչընդոտներ հանելին եթովպացիներուն դէմ: Յուստինիանոս՝ երբ չկրցաւ ստանալ Մայրաքաղաքն Արեւելքի այդ գոհար վաճառքը՝ մեռաքսը՝ յորդո-

[1] Եթովպիան արդի Հապէշաստանն է թէեւ, բայց պէտքէ շփոթել Հապէշներն հին Եթովպացւոց հետ որք սեւամորթ էին: Հապէշ կը նշանակէ խառնուրդ: Հապէշ՝ հայացած՝ խափշիկ Արդի Հապէշները խառնուրդ են եգիպտացւոց, Արաբներու եւ սեւամորթներու:

րեց երկու քարոզիչ վանականներ որ շերամի հունտն Արեւմուտք փոխադրեն: Արդէն Բիւզանդիոնի մէջ, կարգ մը յօդուածներով, խօսուած է թէ ինչպէս շերամի հունտն Արեւմուտք փոխադրուեցաւ եւ նախնիք Չինաստան, Սեբեկիա բերով ո՛ր երկիրը կ'իմանային: Երբ այդ վանականներու ձեռքով Յուստինիանոսի փափաքը պատկուեցաւ, շերամարուծութիւնը մեծ կարեւորութիւն ստացաւ բովանդակ կայսրութեան մէջ: Ասորիքի մէջ Տիրոս, Բիրիտոն=Պէյրութ, Եւրոպիոյ մէջ Կ. Պոլիս, Թերէ (Հիւս. Յունաստան), Աթէնք, Կորնթոս մետաքսագործութեան կեդրոն դարձան: Եւրոպա ու արեւմտեան հարաւ. Ասիա «Բիւզանդական» մետաքսահիւս գործուածքներն այդ քաղաքներէն կ'ստանային: Մաքսային յատուկ օրէնքներ կային արտածման ու ներածման համար:

Թ. դարու կէսէն մինչեւ ԺԱ. դարու մէջերը Բիւզանդական կայսրութիւնն իր փառքի դազաթնակէան հասած էր: Կ. Պոլիս աշխարհի առաջնակարգ քաղաքն եղած էր ամէն տեսակէտով: Բազմաթիւ հիւրանոցներ, որբանոցներ, ապաստանարաններ ու դպրոցներ կային տեսչութեան տակ բարձրատիճան պաշտօնատարի մը, որ Ուֆանսղրոֆի կը կոչուէր: Եկեղեցիներն եւ ուրիշ շէնքեր իրենց ոսկեղէն ու արծաթեղէն խճանկարներով եւ փողոցներն ու հրապարակներն իրենց արուեստագիտական հրաշակերտներով հրացում կ'աղդէին դիտողին: Կ. Պոլսոյ մէջ վաճառուած ապրանքներուն տուրքն օրական 20 հազար ոսկի Ֆիօրին էր: Կ. Պոլսէն ետք՝ իբր վաճառականութեան կեդրոն՝ նշանաւոր էր Սելանիկ: Մասնաւորապէս այդ քաղքին պաշտպան Դեմետրոս սուրբին տօնախմբութեան առթիւ ամէն կողմէ աշխարհախումբ բազմութիւն կ'այցելէր հոն: Արուեստ ու գրականութիւն ծաղկած էին այդ քաղքին մէջ: Աւելի հարաւ կային հարուստ ու ճարտարարուեստ քաղաքներ, Թերէ, Կորնթոս, Բաղրաս, որ մետաքսեղէնի ու հիւսուածագործութեան կարեւոր կեդրոններ էին: Բիւզանդական կայսրութիւնն առեւտրական հաղորդակցութեան մէջ էր շրջակայ ժողովուրդներու հետ: Մինչեւ Ժ. դար Դամասկոս ու Հալէպ Ծայրագոյն Արեւելքի ապրանքներու մեծ հրապարակներն էին, մանաւանդ Անտիօք

ուր Արեւելքի ու Արեւմուտքի ապրանքները կը փոխանակուէին: Ո՛չ նուազ շահաստան քաղաք մ'էր Արծն, որու կործանումէն ետք (1040) վաճառականները դադարեցին Կարին=Թէոդոսուպոլիս, որ կոչուեցաւ Կարում: Եգիպտոսի Ալէքսանդրիա քաղաքն ալ նշանաւոր էր: Չկար ազգ մը որու հետ առուտուր չընէին Բիւզանդացիք: Կ. Պոլիս անբաւ հարստութիւն ամբարած էր: Ի հաշիւ պետական գանձուն Վասիլ Բ. ի առած վաճառքներու հարկն 230 միլիոն դրամ էր: Կ. Պոլսոյ, Թեսալոնիկէի, Աթէնքի, Թերէի ու Կորնթոսի ձեռագործները կը փնտուէին: Թերէ ու Պելոպոնէս անուանի էին մանաւանդ մետաքսագործութեան մէջ: Արուեստագէտ դասը բարդաւած վիճակ մ'ունէր եւ համայնքներ կազմած էր: Ծառեր ուղեցին անոնց հեղինակութիւնը ջնջել: Սելանիկի մէջ մասնաւորապէս վաճառական ու արհեստագէտ դասը Յունական սնունով Մեգի=միջնակարգ կը կոչուէր: ԺԱ. դարուն սկսաւ կոչուիլ Վուրդեգի, Ծրանսերէն Bourgeois յունարէն ձայնաշրջումը: Վաճառականներն ու արհեստաւորները դիմագրեցին զիրենք ձեռող ոյժերուն: Բիւզանդացի հպատակները կ'աշխատէին, կը գործէին: Հելլենացած օտարականներն էին որ Բիւզանդացի հպատակին արտադրածները կը փոխանակէին ու կը փոխադրէին: Վենետիկցիները, ձեռնօպցիները, Պիզացիները, Ամալֆիցիներն հեռզհեռէ իւրացուցին կայսրութեան վաճառականութիւնը: Բիւզանդական արտադրութիւնները կամայ կամայ պակսեցան եւ ասոր հետեւանքով Բիւզանդական ծովային վաճառականութիւնն ինկաւ, ինչպէս նաեւ ճարտարարուեստը: Ժողովուրդը ծանր հարկերու տակ մնաց եւ այս անգոհացուցիչ վիճակ ազատ ասպարէզ բացաւ Իտալական այդ հասարակապետութիւններուն, որք իրենց ձեռք առին վաճառականութիւնը, զօրաւոր դադութներ կազմելով Բիւզանդիոնի մէջ: Բիւզանդացւոց եւ Իտալացիներուն միջեւ առեւտրական մրցում չկար, ո՛չ ալ անտեսական օրէնքներ՝ Վենետիկցիներու անյազ առեւտուրը կասեցնող: Բիւզանդիոն ալ շահ չունէր օտարներու առեւտրական մրցումէն: Վենետիկցիներն հեռզհեռէ ազատ եղած էին մաքս վճարել: Միայն Պիզացիներն ու ձեռնօպցիներն աննշան գումար մը կը վճարէին:

Բիւզանդական վաճառականութիւնը ջնջուած էր ԺԳ. դարու սկիզբը: Իրեն յաջորդած էին Վենետիկեան, ձեռնօպական եւ Պիզայական վաճառականութիւնները: Դ. Խ.

Հ Ի Ի Ս Ե Լ Ա Ն Ի Ի Թ Ք

Բ.

Բ Ա Մ Բ Ա Կ

Բամբակը՝ որ մեր հագուստին ու կարասիներուն է՛ն ա՝ ժան ու յարմար նախանութն է, եւ որու շինութիւնն ու պատրաստութիւնը բիւրաւոր անձանց զբաղում եւ ապրուստ կը հայթայթէ՝ բամբակենիի [մուլաբոյսներու (malvacée) տեսակէն] հունտին շուրջը պատող ձերմակ ու նուրբ մազն է:— Բամբակը՝ իր առատութեամբ ու ամուրթեամբ՝ թանկագին նուէր մ'է, զոր բնութիւնը տուած է մարդուն, զի այսօր, մեզ սնունդ տուող բոյսերէն յետոյ եւ երկաթին ու ամուրթին չափ օգտակար ու անհրաժեշտ պէտք մը դարձած է ան մեզ համար:

* * *

Պատմական. — Յայտնի չէ թէ ի սկզբան բամբակն ե՞րբ եւ ո՞ւր մշակուած ու գործուած է, բայց սա ծանօթ է որ Հնդկաստանի Ինդոս գետին այս կողմի բնակիչք բամբակէ շինուած հագուստներ կը հագնէին շատ հին ժամանակներէ ի վեր: Պատմութեան հայրը՝ Հէրոդոտ' (ն. ք 500) կ'ըսէ թէ Հնդկները կը մշակէին ծառ մը, որ փոխանակ պտուղի բուրդ կուտար, ոչխարին բուրդէն աւելի մաքուր, աւելի ձերմակ: [Գերմաներէն ծառի բուրդ (Baumwolle) կ'ըսեն բամբակին]: Սղրապոն ալ (ք. 20) կը հաստատէ թէ Հնդկաստանի բնակիչք վրան ծաղկէ նկարներով բամբակէ կտուներ կը հագնէին: Գաղղիերէն լեզուի մէջ indienne կ'ըսեն կտուին, որ Հնդկներէ առնուած ըլլալը կը ցուցնէ:— Ափրիկէի ու Ամերիկայի մէջ ալ շատ հին ժամանակներէ ի վեր կը մշակուէր բամբակը: Սպանիացիք երբ Ամերիկան գտան եւ Բորդուկալցիք երբ հարաւային Ափրիկէի

եզերքներն ելան, տեսան որ տեղացիք բամբակի մշակութեամբ, փոխանակութեամբ եւ գործուածքով կ'զբաղէին — Բամբակենիի մշակութիւնը Քրիստոսէ առաջ տարածուեց: Պարսկաստանի ու Եգիպտոսի մէջ եւ Մ ջերկրականի եզերքն ուրկէ շատ ետքն անցաւ Եւրոպա, բայց չկրցաւ զարգանալ հոն: Միջին դարու մէջ Սպանիացիք ի Պարսկոնա մշակեցին բամբակը: Իտալիա ու Պելժիա հետեւեցան անոնց: Մինչեւ 1560 Եւրոպայի միւս երկիրները չէին գիտեր բամբակ մշակել: Չարմանալի չէ՞ սա իրողութիւն թէ Անգլիա, որ այսօր իր բամբակեղէններով կ'ողողէ ամբողջ աշխարհի հրապարակներն եւ իր փառքին ու մեծութեան մէկ մասն անոնց կը պարտի, 16րդ դարուն վերջերն սկսաւ բամբակը մշակել: Գաղղիա 17րդ դարուն միայն սկսաւ բամբակի մշակութեան եւ մրցումի ելաւ Անգլիոյ հետ: Ամերիկա 19րդ դարուն սկիզբը միայն կը ձեռնարկէ բամբակի մշակութեան եւ քիչ ատենէն, խահուէին ու շաքարին պէս, կ'խրացնէ ամբողջ հրապարակը, բամբակի արտադրութեան 85 0/0ը միայն ինք մատակարարելով:

Մշակութիւն. — Գաղթականք՝ ուր որ գացած են գրէթէ ամէնէն առաջ բամբակ մշակած են, որովհետեւ չկայ բոյս մը, որ առանց յոգնութեան, առանց ծախքի, այսքան դիւրին մշակուի եւ այսքան առատ ալ արդիւնք տայ: Բամբակենին քիչ շատ ամէն կլիմայի կը յարմարի, բայց տաք երկիրներու մէջ աւելի արգասաւոր կ'ըլլայ: Սերմանելն ու քաղելն 7—8 ամսուան գործ է: Նախ՝ Ապրիլի մէջ դաշտը կը հերկեն եւ խոփով բացուած ծակերուն մէջ կը նետեն հունտը, որ մեծնալով կ'ըլլայ տունկ եւ յետոյ ծառ: Այդ միջոցին ընելիք ուրիշ բան չկայ բայց միայն հսկել որ գէշ խոտերն արգելք չըլլան տունկին զարգանալուն: Ծառն իր ժամանակին ծաղիկ կը բանայ եւ հունտերը՝ արեւին ճառագայթներուն տակ՝ 70—80 օրէն հատունալով կը բացուին եւ բամբակը դուրս կուտան: Հետզհետէ բացուած պատեաններէն ամէն առաւօտ մատով կը քաղեն, կը հանեն բամբակը կամ պատեանով միասին կը բրցնեն եւ երկու օր արեւին մէջ կը դնեն որպէս զի չորնայ: Յետոյ ձեռքով կամ մասնաւոր գործիքներով կը հատկանեն եւ պարկերու մէջ դնելով

կամ հակեր շինելով վաճառատեղին կը զրկեն: Չեւքով օրը կէս քիւօ, իսկ մեքենայով 500 քիւօ կը գտուի:

Տեսակ ու յատկութիւն. — Բնագէտք ու բուսաբանք տարակարծիք են բամբակենի տեսակին վրայ: Լիննէ 4, Լամարք 8, Տէտքանտոյ 13 եւ ուրիշներ մինչեւ 20ի կը հանեն: Ճարտարարուեստի մէջ գլխաւորապէս երեք տեսակ բամբակ ընդունուած է, այն է խոտի, Թուփի եւ ծառի: Ասոնք իրենց ծաղիկներուն գոյներովն եւ կոկոններուն մեծութեամբն իրարմէ կը տարբերին:

Խոտի բամբակն շէն 3 կանգուն բարձրութիւն ունի եւ կ'աճի Թուրքիոյ, Եգիպտոսի, Պարսկաստանի եւ Միացեալ Նահանգաց մէջ ու Միջերկրականի եզերաց վրայ:

Թուփի բամբակը 4էն 5 կանգուն բարձրութիւն ունի եւ Ասիոյ, Ափրիկէի ու Ամերիկայի խիստ տաք տեղերը կ'աճի:

Ծառի բամբակը 7էն 10 կանգուն բարձրութիւն ունի եւ կ'աճի Եգիպտոսի, Հարաւային Ափրիկէի եւ Հնդկաստանի մէջ:

Այս բամբակներ ուրոյն ուրոյն յատկութիւններ ունին, բայց առեւտրական հրապարակի վրայ փնտուռած գլխաւոր յատկութիւններն են 1. — Երկայնութիւն, 2. — Նրբութիւն, 3. — Տոկունութիւն եւ 4. — Գոյն:

Երկայնութիւն. — Երկայն թելերն յարգի են: Երկայն ու կարճ թելեր ունեցող բամբակներու գիները 1—5 կը տարբերին: Երկայնաթել բամբակն ալ, բուրդին պէս, նուրբ կերպաներու, իսկ կարճաթելը թանձր (խապա) կերպաներու կը գործածուի: Հնդկաստանի բամբակը՝ այս տեսակէտով՝ Ամերիկայինէն աւելի յարգի է:

Նրբութիւն. — Բամբակին նրբութիւնը ո՛չ թէ տեսակէ տեսակ, այլ նոյն իսկ թելին մէկ ծայրէն միւս ծայրը կը տարբերի 1—4 համեմատութեամբ: Միօրինակ, միաձեւ եւ ոլորի բամբակն յարգի է:

Տոկունութիւն. — Բամբակին տոկուն կամ դիմացկուն ըլլալն անհրաժեշտ է: Գոյն մէջ մեծ տարբերութիւն կ'ընէ: Բամբակին դիմացիտութիւնը չափելու համար մասնաւոր գործիքներ կան: Քանի մը թել քով քովի բերելով կը չափեն եւ բոտ այնմ կը գնահատեն:

Գոյն. — Բամբակն ընդհանրապէս ձերմակ եւ չաքարա-

դոյն կ'ըլլայ: Այս վերջին տեսակն յարգի է: Եւրոպացիք՝ երբ դեռ ծանօթութիւն չունէին բամբակի վրայ՝ Հնդկաստանէ կը գնէին այս թխագոյն տեսակէն շինուած Նանքէն անունով տեսակ մը կտաւ, որ այն ատենուան հարուստներուն համար պերճանքի նիւթ մ'էր:

Արտադրութիւն եւ արտաձուլ. — Վերջին տարիներու բամբակի արտադրութիւնն հետեւեալն է. —

1896 ին	3 300	միլիոն քիլոկրամ
1897 »	2,700	» »
1898 »	2,900	» »

Արտադրող երկիրներուն մէջ առաջին տեղը կը գրաւէ Ամերիկա, որ թէեւ անյիշատակ ժամանակներէ ի վեր բամբակ ունէր, բայց 19րդ դարու սկիզբը միայն սկսաւ զարկ տալ բամբակենի մշակութեան, իբր արտածելի վաճառք: 1800ին բամբակի ընդհանուր բերքն էր 42,000 հակ: 1821ին եղաւ 5,198,000 հակ: 1860ի պատերազմին այս թիւ կէս առ կէս ինկաւ, բայց 1878ին դարձեալ բարձրացաւ 5 միլիոնի: Վերջին տարիներու արտադրութիւնն հետեւեալն է. —

1895—96 ին	9,992,750	հակ
1896—97 »	7,162 500	»
1897—98 »	8,714,000	»
1898—99 »	11,180,960	»

Այս անհուն քանակութեան մէկ մասն Ամերիկա ինք կը սպասէ, իսկ միւս մասն Եւրոպա կը զրկէ: Ամերիկա 12 տեսակ բամբակ ունի: Ամէնէն հաշակաւորներն են ճօրճիա եւ Լուիզանիա: Չմոռանալ ըսել թէ բամբակեղէնի ճարտարարուեստին մէջ առաջնութիւնը միշտ Անգլիոյ կը պատկանի:

Բամբակենի մշակութեան մէջ երկրորդ տեղը կը բռնէ Հնդկաստան:

1897ին արտադրած է	2 458,000	հակ եւ
1893 »	»	1,925 000 »

Ասոնց 5/8ը Անգլիա, 2/8ը Գաղղիա եւ 1/8ն ուրիշ տեղեր արտածուած են: Հնդկաստան ունի 5 տեսակ բամբակ: Գլխաւորներն են Մատրաս եւ Սուրաթ: Հնդկաստանն եւքը կուգան Չինաստան եւ Քարեա որք 1898ին արտադրած են 1 600 000

հակ որ գրէթէ ամբողջովին յատկացուած է տեղական սպաւ-
ման: Չորրորդ տեղը կը բռնէ Եգիպտոս, որ 1898ին ար-
տադրած է 1,226,000 հակ, որու 7/8 ն Անգլիա եւ 1/8 ը
Փաղղիա արտածուած են: Գլխաւոր տեսակներն են Իսքէն-
աէրիէ եւ Մաքօ կամ ձիւմէլ: Առեւտրական հրապարակի
վրայ յարգի է այս վերջին տեսակը, զոր ժիւմէլ անուն
Փաղղիացի մը Բեռնամպուքէ (Ամերիկա) բերած է փոխար-
քայ Մէհմէտ Ալի փաշայի հրամանաւ:

Պրագիլիա 1898ին արտադրած է 222,000, Կեդրոնական
Ասիա՝ 267,000, Թուրքիա եւ Պարսկաստան՝ 178 000, Մեքսիկա
60,000, Իերու՝ 27,000 եւ Յուստան՝ 11,000 պարկ:

Սպառում. — Բամբակի սպառումը 40 տարուան մէջ ե-
ռապատկուած է: 1860ին սպառած էր 4 329 000 հակ, իսկ
1899ին՝ 12,968,000 հակ: Տարազագործ երկիրներու շամ-
փրակներուն (ի) թիւն հետեւեալ ցուցակին մէջ նշա-
նակուած է:

Անգլիա	44,300,000
Եւրոպական միւս երկիրները	30,520,000
Մ. Նահանգք	17,150,000
Հնդկաստան	4,066,000

Հրապարակ. — Ամերիկայի Նիւ Օրլէան եւ Նիւ Եօրք,
Անգլիոյ Լիվըրքուլ, Փաղղիոյ Համբր եւ Գերմանիոյ Պրէմ քա-
ղաքները բամբակի առաջնակարգ հրապարակներ են:

Անուն. — Ամէն հրապարակ՝ բամբակի տեսակներուն
մասին՝ իրեն յատուկ անուններն ունի: Զոր օրինակ.

Անգլիական եւ Ամերիկեան հրապարակները կ'ըսեն.
ordinary, good ordinary, middling, low middling, good
middling, middling fair, fair.

Փաղղիոյ հրապարակը՝ très bas, bas, très-ordinaire,
bon ordinaire, bonne marchandise.

Գերմանիոյ հրապարակը՝ a, ab, b, bc, c, cd, d, de,
e, ef:

Գլխաւոր տեսակներ. — Հրապարակի վրայ ճանչցուած
գլխաւոր տեսակներն են Ամերիկեան երկայն ձորճիա (Մի
Այլէնտ), Եգիպտական Մաքօ, Ափրիկեան Պուռպոն, Ամե-
րիկեան Բեռնամպուքօ, Նիւ Օրլէան, կարճ ձորճիա (Ըբլէնտ),

Հնդկական Սուբաթ, Պէնկալ եւ Եգիպտական Իսքէնաէրիէ:

Գին. — Բամբակի արտադրութեան յաւելման հետ գի-
ներն ալ տարուէ տարի ինկած են: 1872ին մէկ լիպրային գինն
էր 11 1/2 բէնա: Մինչեւ 1878 ամէն տարի 1 կամ 1 1/2 բէնա
ինկած է մինչեւ 1890 անփոփոխ մնացած է: 1890էն սա-
ղին եղած գիները կ'երեւին հետեւեալ ցուցակին մէջ. —


1891ին 4 3/8 բէնա	1896ին 4 բէնա
1892 » 4 »	1897 » 3 7/8 »
1893 » 4 1/2 »	1898 » 3 1/4 »
1894 » 3 5/8 »	1899 » 4 1/2 »
1895 » 3 1/2 »	1900 » 6 1/2 »

Թէեւ, երկու տարիէ ի վեր, ինչ ինչ պատճառներով,
բամբակին գինը վրայ դրաւ, բայց դարձեալ հետզհետէ պի-
տի իջնէ, քանի որ ամէն տեղ բամբակի մշակութեան ոյժ կը
տրուի եւ արտադրութիւնը կը շատնայ եւ քանի որ մանա-
ւանդ Փաղղիա Ալժէրիոյ եւ Գերմանիա իր Ափրիկեան հո-
ղերուն մէջ մշակել կուտան իրենց պէտք ունեցած բամբակը:

Տարբապարբերակ. — Բամբակին տարբապարբերութիւնն է


43,25 ⁰ / ₀	Ածխածին
5,50 ⁰ / ₀	Ջրածին
51,25 ⁰ / ₀	Թթուածին

Ա.



Պ Ի Տ Ի Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ե Ն Ք

« Առեւտրական Բառարան » մը, վաճառականութեան,
հարստարուեսի եւ զբոսաշրջութեան վրայ զուտ գործնական
ձանօթութիւններով, Ե. ՏԵՏԵՆ սկսեալ:



ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՕՐԷՆՍԳԻՏՈՒԹԻՒՆ

Ս Ն Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Սնանկութիւնը ⁽¹⁾, ըստ Քանունը Թիճարէթի 117 յօդուածին, վաճառականի մը առեւտրական գործողութենէ մը առաջ եկած մէկ պարտքը չկարենալ վճարելն է: Ուրեմն սնանկութեան համար երկու պայմաններ կան, 1.— Պէտք է որ սնանկացողը վաճառական ըլլայ և 2.— վաճառականի գործողութենէ մը առաջ եկած մէկ պարտքը չկարենայ վճարել: Քիչ մը բացատրենք ասոնք:

1. Ըսինք թէ սնանկացողը վաճառական ⁽²⁾ ըլլալու է: Ուրեմն վաճառական չեղող մէկը, ըստ Քանունը Թիճարէթի, չի կրնար սնանկանալ: Թէեւ Թուրքիոյ քաղաքային օրէնքին՝ Մէճէլլէի՝ նայելով վաճառական չեղողներն ալ կրնան

[1] Քանունը Թիճարէթը երեք կարգի կը բաժնէ սնանկութիւնը. Ա.— Պարզ սնանկութիւն [ա տի ի Քլա], որ սնանկացողին կամբէն անկախ պատճառներէ առաջ կուգայ Բ.— Անխոհեմութեամբ սնանկութիւն [քաֆսիքարը ի Քլա] եւ Գ.— Խարդախութեամբ սնանկութիւն [չիլլի ի Ֆլա]. Առաջին պարագային մէջ օրէնքն ո՛րէ է պատիժ չի սահմաներ: Երկրորդ պարագային մէջ, սնանկացողը մէկ ամիսէն մինչեւ 2 տարի բանտարկութեան կը դատապարտուի, իսկ երրորդ պարագային մէջ՝ առժամայ [3էն 15 տարի] տաժանակիր աշխատութեան:

[2] Քանունը Թիճարէթի Ա. յօդուածին համաձայն վաճառական կը կոչուին ամէն անոնք որ առեւտրական գործողութիւններն իրենց սովորական գրադուս ըրած են: Ուրեմն պէտք չէ վաճառական բառը ժողովրդեան գործածած իմաստով [մեծ քանակութեամբ ապրանք ծախող] ըմբռնել: Այսպէս նպարավաճառ մը, յաննակատար մը, նաւատէր մը, Թատրոն համ օձէլ բանեցնող մը վաճառականներ են:

սնանկանալ, բայց Քանունը Թիճարէթի և Մէճէլլէի սնանկութիւններուն մէջ մեծ տարբերութիւններ կան: Ըստ Մէճէլլէի՝ մէկը սնանկանալու համար պարտքն ինչքին հաւասար կամ անկէ աւելի ըլլալու է, մինչդեռ Քանունը Թիճարէթի համեմատ՝ պայման չէ որ պարտքն հաւասար ըլլայ ինչքին կամ անկէ աւելի: Հարստութիւնը պարտքէն քանի մը պատիկ աւելի ալ ըլլայ, սնանկացեալ կը նկատուի եթէ ժամանակին չկրնայ վճարել պարտքը: — Ուրիշ տարբերութիւն մ'ալ: Մէճէլլէի համեմատ՝ սնանկացողի մը տրամադրութեան տակ չեն գտնուիր սնանկութեան թուականէն առաջ ունեցած ինչքերը միայն, իսկ անկից վերջ ձեռք անցուցած ստացուածքը կրնայ ուղածին պէս գործածել, մինչդեռ Քանունը Թիճարէթի համեմատ՝ սնանկացող մը ո՛չ սնանկութենէն առաջ ունեցած և ո՛չ վերջէն ստացած ինչքին տէրը չէ: Այդ ինչքը մասա կոչուած պահանջատէրներու խմբին կը պատկանի ⁽³⁾: Մեր նպատակն ըլլալով Քանունը Թիճարէթի սնանկութեան վրայ միայն խօսիլ, ըսինք թէ սնանկացողը պէտք է վաճառական ըլլայ: Աւելցնենք թէ վաճառական ըլլալու համար միայն առեւտրական գործողութիւններով զբաղիլ չի բաւեր, այլ օրինական տարիքն ալ ունենալու է, այսինքն ըստ Քանունը Թիճարէթի Բ. յօդուածին, պէտք է 21 տարին լրացուցած ըլլայ կամ 18 տարին աւարտելով խնամակալէն արտօնութիւն առած ըլլայ: Ուրեմն՝ այս տարիքէն վար եղող մէկն եթէ վաճառականութիւն ընելով իր առեւտրական մէկ պարտքը չկարենայ վճարել, սնանկ չի նկատուիր: Թէեւ օրէնքը կ'արգիլէ կարգ մը պաշտօնատարներուն վաճառականութիւն ընել, բայց եթէ անոնք, հակառակ օրինական արգելքին, վաճառականութիւն ընելով իրենց պարտքը չկարենան վճարել, սնանկ կը հռչակուին:

[3] Այս տարբերութիւնը եւրոպական օրէնքներուն մէջ ալ կայ: Այսպէս, ըստ առեւտրական օրէնքի, սնանկութեան կ'ըսուի faillite եւ սնանկին՝ failli, իսկ ըստ քաղաքային օրէնքի սնանկութեան կ'ըսուի déconfiture եւ սնանկին՝ déconfité:

Ձ. Ըսինք թէ վաճառական մը՝ սնանկանալու համար՝ պէտք է որ իր առեւտրական մէկ պարտքը (սեյնը քիճարի) չկարենայ հատուցանել: Ուրեմն, վաճառական մը եթէ հացագործի կամ դերձակի պէս անձերու ուէեցած սովորական մէկ պարտքը (սեյնը ասի) — որչափ ալ մեծ ըլլայ — չկրնայ վճարել, օրէնքը սնանկ չի հռչակեր դայն:

Վաճառականի մը սնանկութիւնը վճարելու համար անոր դրամական կարողութիւնը բնաւ ի նկատ չառնուիր: Եթէ մէկը, որչափ ալ հարուստ կ'ուզէ թող ըլլայ, իր մէկ պարտքը չկրնայ ժամանակին վճարել, սնանկ կը նկատուի: Այսպէս, 10,000 ոսկիի կալուած կամ ապրանք և կամ պահանջ ունեցող վաճառական մը երբ իր 100 ոսկինոց մէկ պարտքը պայմանաժամին չկրնայ վճարել, սնանկ կը հռչակուի: Իրաւ է թէ օրէնքին այս տրամադրութիւնը շատ խիստ է, բայց առեւտրական գործառնութեանց կանոնադրութիւնը պահպանելու համար ասկէ ուրիշ միջոց չկայ, որովհետեւ հակառակ պարագային շատ մը վաճառականներ պիտի մնասուէին: Զոր օրինակ, երբ կալուածատէր վաճառական մը գիտնայ որ իր կալուածներուն շնորհիւ պիտի չսնանկանայ եթէ օրին իր պարտքը չվճարէ, անշուշտ անտարբեր կը գտնուի եւ պարտքն օրին չի վճարեր, որով առնելիքուն ալ չի կրնար վճարել ուրիշին ունեցած պարտքն եւ այսպէս շարունակաբար հարիւրաւոր վաճառականներ կրնան մնասուիլ և փճանալ: Եւրոպական օրէնքներն ալ այս մասին մերինէն տարբեր չեն, միայն թէ Եւրոպական դատարանք անկնկալ դրամական տագնապները (crise financière, krack) ի նկատ առնելու և գնահատելու իրաւունքը կը վայելեն, այսինքն այդ տեսակ խնդիրներու մէջ կրնան, յօգուտ երկրին, սնանկ չհռչակել պարտքը չվճարող վաճառական մը: Թէեւ մեր օրէնքին մէջ այս մասին մասնաւոր տրամադրութիւն մը չկայ, բայց կառավարութիւնը՝ այդ կարգի տագնապներու առաջ՝ պէտք եղած միջոցները ձեռք առած է միշտ: Բանի մը տարի առաջ պաշտօնապէս շնորհուած մօնարքիօմն այս կարգի միջոց մ'էր:

Վաճառականի մը պարտքը չկրնալ հատուցանելն աղեր-

սագրի, բողոքագրի (protesto) և վճռագրի (իլամ) նման պաշտօնական թուղթերով պէտք է հաստատուի: Վաճառականի մը՝ առանց պատճառի՝ խանութը ժամանակ մը գոցելը կամ իր մէկ պահանջատէրէն նամակով պարտքը վճարելու համար ժամանակ խնդրելն ալ կրնայ ապացոյց մը նկատուիլ իր վճարելու անկարողութեանը: Վաճառական մը մահուընէն վերջն ալ կրնայ սնանկ հռչակուիլ: Վաճառականի մը սնանկութիւնը՝ ծանր հետ'ւանքներ ունենալուն համար՝ պէտք է դատարանի մը վճռագրով վաւերացուած ըլլայ եւ այդ վճռագիրն հրատարակուի, որպէս զի ամէն մարդ գիտնայ:

ՏԻՐԱՆ ԵՐԿԱՆՆԱՆ

ԱՌԵԻՏԻՎԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի Տ Ա Լ Ի Ա

Գ.

Աշխարհագրական դիրքը. — Ժողովուրդը. — Երկրագործութիւնը. — Հանրային հարստութիւնը. — Ճարտարարուեստը. — Վաճառականութիւնը [Արտածում, ներածում]. — Հաղորդակցութեանց ճամբաները. — Թղթատարութիւնը. — Դրամն ու Դրամատունը. — Գողթնակալութիւնը. — Առեւտրական նաւերը:

Աճառք եւ պահուստ ծաւեր. — Երկրին 16 0/0 ը, ինչպէս րսինք, անտառ է ուր գլխաւորապէս կը գտնուին կաղնի, շագանակենի, շոճի ևլն: Մօտաւոր հաշուով տարին կ'արտադրէ

	Խոր. մէդր	Արժ. ֆ		
Ընտիր փայտ	1,500,000	20	միլիոն	Ֆր.
Վառելափայտ	6,500,000	21 1/2	»	»
Ածուխ	3,100,000	19	»	»
Ստորին տեսակէ փայտ	15,500,000	32	»	»

Պատշաճու ծառերուն գրէթէ ամէն տեսակները մշակուած են հոն, մանաւանդ անոնք որ տաք կլիմայի յատուկ են, ինչպէս խնձորենի, թզենի, արմաւենի, տանձենի, նանենի ևլն: Միջերկրականի եզերքն ամբողջ լեմոնի, նարնջի տունկեր մշակուած են: Աստուցմէ 50-55 միլիոն ֆրանքի միայն կ'արտածուին ի Գերմանիա և Անգլիա:

Անասնաբու ծուրիւն — Ամենագեղեցիկ մարգագետիններ կան Բոյի գեաահովտին մէջ, ուր առատ և մաքուր ջուր կը հոսի արհեստական ջրանցներու միջոցաւ: Բնական մարգագետիններէն զատ կան նաև արուեստական մարգագետիններ, որք կը բաղկանան ասպարուտներէ (գապա եօհնայրի): 1870էն առաջ իտալական արջառին տեսակը լաւ չէր, բայց այդ թուականէն ի վեր շատ ազնուացած է թէ՛ վերոյիշեալ բնական և արուեստական մարգագետիններու և թէ Ջուլիցերիայէն ու Անգլիայէն բերուած ընտիր տեսակներուն շնորհիւ: Իտալիոյ անասնաբուծական վերջին վիճակագրութեան մէջ կը գտնենք հետեւեալ թիւերը. —

Ոչխար	Հատ	7,000,000	85 միլ. ֆր.
Եղ	»	5,000,000	1400 »
Այծ	»	1 800,000	24 »
Խոզ	»	1,800,000	110 »
Էշ	»	1,000 000	50 »
Զի	»	750,000	450 »
Զորի	»	300,000	120 »

Իտալիա այս անասուններուն շնորհիւ տարեկան $1\frac{1}{2}$ միլիոն ֆր. կ'ստանայ, հետեւեալ ստորարածանումներով. —

Միս	750 միլիոն ֆր.
Ոսկոր	10 $\frac{1}{2}$ » »
Բուրդ	57 » »
Կաթ	250 » »
Մորթ	75 » »
Զիւռ և եզի աշխատութեան արդիւնք	372 » »

Պանիր, Կարագ. — Իտալիա՝ նոր մէթոտներու շնորհիւ՝ յաջողած է կարեւոր դիրք մը բռնել այս ճիւղին մէջ: Տարեկան արտադրութիւնն է 17—18 միլիոն քիլոկրամ կարագ

և 70—80 միլիոն քիլոկրամ պանիր: Կ'արտածէ 26 միլիոն ֆր. արծէքով պանիր և կարագ:

Հաւաքուծութիւնն ալ արժանի է յիշատակութեան: Եւրոպիոյ հրապարակին գլխաւոր մատակարարն է և նոյն խակ Ռուսիոյ հետ կրնայ մրցիլ:

1890ին արտածած է 144,000 կենդինար հաւկիթ

1899ին » 320,000 » » 40 միլիոն ֆր.

արժողութեամբ և հաւեղէն 15 միլիոն ֆր. արծէքով:

Ձկնորսութիւն. — Իտալիոյ ծովեզերքը մեծ քանակութեամբ և ամէն տեսակ ձուկեր կան: Թարէնթայի պզտիկ ծովը 150 տեսակէ աւելի թուրամորթ եւայլն ունի: Քօմաքիօ ջրակոյտերն աշխարհի ամէնէն նշանաւոր ձկնաւազաններն են: Իտալիա մօտ և հետու ծովերու վրայ 58,516 թօնօ տարողութեամբ 21,635 նաւեր ունի, ուր 75,000 ձկնորսներ կ'աշխատին ձուկ, սպունգ և բուստ որսալու:

Ճարտարուեստ և Վաճառակաւորութիւն. — Հաճե. — Իտալիա հանքածուխ չունի: Ածուխը, որ ներկայ ճարտարարուեստին հոգին, ոյժն ու լոյսն է, գրէթէ բնաւ չկայ Իտալիոյ մէջ, որ այս կերպով հարկադրուած է իր հանքային հարստութեան մեծ մասն այլուր ծախել: Իտալիոյ գըլխաւոր հանածոն է ծծումբը: Ունի նաև ընտիր տեսակ երկաթի, գէնիլի, կապարի, պղնձի եւայլն հանքեր: 1899ին հանած է $3\frac{1}{2}$ միլիոն թօնօ ծծումբ, 200 հազար թօնօ երկաթ, 130 հազար թօնօ գէնիլ, 100 հազար թօնօ պղինձ, 35 հազար թօնօ կապար, որոց ընդհանուր արծէքն եղած է 72 միլիոն ֆր: Իտալիա շահագործած է 1000է աւելի հանքեր և բանեցուցած է 55,000 գործաւոր և 300 շարժիչ մեքենայ, 6800 ձիու գորութեամբ: Թէև մինչեւ վերջին տարիներս Իտալիա Անգլիայէ, Գերմանիայէ ու Գաղղիայէ կը գնէր երկաթ, գէնիլ և պողպատեղէն, սակայն կառավարութիւնը՝ վերջին ծայր ոյժ տալով մետաղային ճարտարարուեստին՝ կարող եղաւ հիմնել երկաթեայ գիծերու, վայրաշարժերու, նաւերու, թնդանոթներու և հսկայ մեքենաներու շինութեան յատուկ մեծ գործարաններ, 195ի չափ, որք

1899ին բանեցուցած են 33 հազար գործաւոր, 870 շարժիչ, 338 շոգեշարժ եւ 471 ջրաշարժ մեքենաներ 37,500 ձիու ոյժով: — Իտալիա ունի նշանաւոր քարահանքեր, որք տարին 30—32 միլիոն քարեղէն կ'արտադրեն: Քարարէ քաղաքը (Թոսքանայի մէջ) ո՛չ միայն քարի արտադրութեան այլ նաև անդրիագործութեան մասին աշխարհի ամէնէն առաջին վայրն է, ուր կ'աշխատին 200 հազար գործաւոր եւ տեսակ տեսակ մարմարեայ արձաններ ու դարձեր շինելով մեծ մասամբ Անգլիա եւ Ամերիկա կ'արտածեն:

Հիւսիսային քարեւաքարեայ հարստարուեստ. — Մեսսալ. — Իտալիոյ է՛ն գլխաւոր արուեստն ու զբաղումն է մետաքսագործութիւնը: Իտալիա աշխարհի երկրորդ մետաքսագործ երկիրն է Չինաստանէն յետոյ: 1899ին արտածած է 316 միլ. Փր.ի մետաքս եւ 40 միլ. Փր.ի մետաքսեղէն: Կը բանեցնէ 200 հազար գործաւոր, 1400 կարժարան, 60,000 պուտնարդ (bassine, գոգաւոր կաթսայ), 487 ոլորատուն, 17 գզարան, 2 միլիոն իլ, 179 հիւսարան, 8000 գործատուն եւ 11 հազար ուրիշ ձեռքի գործիքներ:

Բամբակ. — Ճարտարարուեստի այս ճիւղը՝ թէեւ վերջին տեսններս ծաղկած՝ խիստ շուտ յառաջանալու յոյսեր կը ներշնչէ, մանաւանդ Թուրքիոյ հրապարակին վրայ, ուր 7 միլիոն Փր. արծէքով բամբակ ներածուած է 1897ին, մինչ 1899ին կրկնապատկուած է այս թիւ: Սիկիլիա, Քալապրիա եւ Սարտենիա կ'արտադրեն ընտիր տեսակ բամբակ, որ սակայն չի բաւեր տեղական սպառման: Այս պատճառաւ մեծաքանակ բամբակ կը գնուի Ամերիկայէ, մօտաւորապէս 100 միլիոն Փր. արծէքով: Իտալիա ունի բամբակի 530 գործարան, 2 միլիոն շամիրակ (իլ), 27 հազար ջրաշարժ եւ 20 հազար շոգեշարժ մեքենայ, 90 հազար գործաւոր եւ 10 հազար կարկահ:

Բուրդ. — Իտալիա տարին 15—16 միլիոն քիլոկ. բուրդ կ'արտածէ: Տեղական բուրդն անբաւական ըլլալով իր պակասը կը հոգայ Աւստրալիայէ եւ Ամերիկայէ: Ունի 6500 մեքենայ եւ 3760 ձեռքի գործիք: 18,500 տուներ կ'զբաղին բրդեղէնի պատրաստութեան: 1899ին արտածուած բրդեղէնին արծէքն է 102 միլիոն Փրանք: Կարեւորութենէ զուրկ

չեն Իտալիոյ այն գործարաններ, որք քթան, թուղթ, մորթ, գլխարկ, չիմկնդ, յախճապակի, ալիւր եւ ալիւրեղէն կը պատրաստեն: Եղրակացնենք. — թէեւ երկրի մը ճարտարարուեստի կարողութիւնն իր ունեցած երկաթէն ու հանքածուխէն կը չափուի, — ի՛նչ որ պէտք եղածին չօտի չունի Իտալիա, — բայց յուսալի է որ իր ըրած մեծամեծ գոհողութիւններով քիչ ատենէն պիտի կրնայ կարեւոր տեղ մը գըրաւել ճարտարարուեստի ամէն ճիւղերուն մէջ:

Վանառակաւուքիւն. — Իտալիոյ գլխաւոր վաճառաչահ քաղաքներն են Հոսով (ըն. 436,000), Նաբոլի (536,000), Միլան (425,000), Թուրինո (329 000), Բալէրմօ (272 000), Ճենովա (210 000), Ֆիորէնցա (191,000), Վենետիկ (159 000), Մեսինա (142,000), Պոլոնիա (147,000) եւ այլն:

1890ին Իտալիա ներածած է 1438 միլիոն Փր.ի ապրանք եւ արտածած է 1023 » » »
 1899ին » ներածած է 1544 » » » եւ արտածած է 1351 » » »

Իտալիոյ ներածումներուն գլխաւոր մասը կը կազմեն նախնական նիւթերը:

1899ին Իտալիա հետեւեալ երկիրներուն հետ գործաւորութիւն ըրած է:

	Արտածում	Ներածում
Գերմանիա	192 միլիոն Փր.	157 միլիոն Փր.
Զուիցերիա	185 »	39 »
Գաղղիա	146 »	116 »
Աւստրիա	143 »	130 »
Անգլիա	116 »	254 »
Մ. Նահանգք	107 »	166 »
Արժանթին	88 »	34 »
Թուրքիա	58 »	22 »
Պելժիա	23 »	32 »
Հնդկաստան	20 »	69 »
Պրայիլիա	16 »	12 »
Ռուսիա	10 »	188 »

(Մնացեալն յաջորդ սեւրով)


Ա. Գ.

Յ Ե Ի Ե Լ Մ Ա Ն Փ Ո Ր Զ

Հետեւեալ միջոցով կարելի է երկայն յաւելումներու փորձը կատարել իսկոյն: — Սինակ առ սինակ կը գումարէք, մասնակի գումարներն իրարու տակ դնելով եւ ամէն անգամուն դէպի ձախ՝ թիւ մը առաջ տանելով: — Օրինակ.

Սովորական յաւելում	Փորձ
12675	12675
9476	9476
3827	3827
6519	6519
3814	3814
2517	2517
4872	4872
2679	2679
3887	3887
7624	7624
2673	2673
5645	5645
2412	2412
5689	5689
21743	21743
11217	11217
5643	5643
2885	2885
<hr/>	<hr/>
115797	97
	80
	109
	64
	4
	<hr/>
	115797

Աւելորդ է գումարելի թիւերը նորէն ընդօրինակել: Մենք դիտմամբ բրինք լաւ հասկցնելու համար:



Ն Մ Ո Յ Շ Ն Ե Ր

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐՈՒ

Կ. Պոլիս 31 Դեկտեմ. 1900

Տէ՛ր

Ամսոյս 5 թուակիր նամակաւ ծանուցուած 50 պարկ սուրճն անվնաս ստացայ: Փոխարժէքն այս օրուան թղթատարով ձեզ կը դրկեմ ծրարով մը, որու պարունակութեան մանրամասնութիւնը կը գտնէք ստորեւ: Հաճեցէք իմ հաշուոյս պահանջ արձանագրել այս գումարը Փր. 6321.08
ինչպէս նաեւ 2%₀ դեղչը » 21.14
Փր. 6342.22

Եւ առած ըլլալնիդ իմացնել ինձ:
Զեր հրապարակին կացութեան վրայ տուած տեղեկութիւններնուդ համար շնորհակալ եմ: Հաճեցէք միշտ իմացընել ինձ եթէ կարեւոր փոփոխութիւն մը պատահի:
Յարգանք
Ա. Գ.

Մանրամասնութիւնք

211 հատ ոսկեղրամ	20	Փրանքնոց	4220
200 » »	10	»	2000
5 » դրամատոմս	20	»	100
Մանր դրամ եւ դրամաթուղթ			1.08
			<hr/>
			6321.08

مکاتیب تجاریہ نمونہ لری

افندی

شہر جارینک ۵ تاریخلو تحریراتکنز ایله مشعر ۵۰ چوال قہوہ
 حسنی خالدہ بالوصول بدلتک تسویہ سی ایچون بوکونکی پوستہ ایله
 زیرده مسطور مفردات موجبنجه ۶۳۲۱ فرانق و ۸ ساتیمی حاوی
 برامانت طرفکزه ارسال اولندی . اشبو مبلغی ویوزده ایکیدن ۲۱
 فرانق ۱۴ ساتیم اسقونظوی جمعاً ۶۳۴۲ فرانق ۲۲ ساتیم حسابمه مطلوب
 قیدبرله اخذ ایلدیککزی لطفاً بندہ کنزه اشعار بیوریکر پیاسه کزک
 احوالی حقنده ویردیککنز معلوماتدن طولایی وجبہ شکرگزاری ایفا
 وواقع اوله جق تحولات مهمه نک دخی اشعارکزی رجا ایله عرض
 خلوصه ابتدار ایدرم فی ۳۱ کانون اول سنه ۳۱۶

مفردات جدولی

۴۲۲۰	۲۰ فرانق التون	۲۱۱ عدد
۲۰۰۰	» » ۱۰	» ۲۰۰
۱۰۰	۲۰ فرانقلق بانکه قایمه سی	» ۵
	پوسته پولی و اوققلق ۱ . ۸	
<hr/>		
۶۳۲۱	۰ . ۸	

MODÈLES
 DE
 CORRESPONDANCE COMMERCIALE

Cons/plè le 31 Decembre 1900

Monsieur

J'ai reçu bien conditionnés les 50 sacs de café que vous m'avez annoncés par votre lettre du 5 court. et je vous en envoie aujourd'hui le montant par paquet contenant les espèces ci-dessous détaillées avec fr. 6321.08 dont vous voudrez me créditer en y joignant « 21.14 pour escompte à 2%, et m'en accuser réception. 6342.22

Je vous suis reconnaissant pour les notes que vous me transmettez sur la situation de votre marché. Veuillez bien les continuer lorsqu'il y surviendra quelque variation importante.

Votre dévoué

A. C.

Bordereau

211 pièces de frs.	20	frs. 4220
200 » »	10	» 2000
5 notes »	20	» 100
Monnaie et timbre		» 1.08
<hr/>		6321.08

SPECIMENS OF COMMERCIAL

CORRESPONDENCE

Cons/ple 31st December 1900

Sir

I have received in good condition the 50 bags of Dominigo coffee, you advised me in your favour of 5th inst. By to day's mail you will receive a parcel containing

fr. 6321,08

in different sorts, as per specification at foot.

Please to credit my account of this amount, adding for discount at 2^o/_o under advice fr.

21.14
6342,22

I am much obliged for your information on the state of your market, and should be thankful to you for continuing same as often as anything interesting occurs.

With my best compliments, I remain yours trully
A. C.

Specification

211 Gold pieces at fr. 20	4220
200 » » » » 10	2000
5 Banknotes » » 20	100
Postage stamps and coin	1, 08
	<u>6321, 08</u>

Գ Ի Ն

12 Տետրի՝ դրու 12 ԿԱՆԵՆԿ

Գաւառաց հարկար՝ իբր թոսի ծախք՝ 3 դրուշ արեղի

Հասցե

ՍԻՄՕՆ ԶԷՕՄԼԷԲԱՆ

Ի Խմբագրատուն «Բիւզանդիոն» Հայաբերքի

Պապը Ալի ճառսեւի թիւ 23—25 Կ. Պոլիս

ԱՆՀՐԱԺԵՇՏ

Ամեն վաճառականի, գրագրի, ուսանողի եւայլն.

معارف نظارت جلیله سنک ۳۰۳ نومرولی و فی ۱۶ تشرین اول
سنه ۱۶۴۰ تاریخلو رخصتنامه سیله طبع اولمشدر

« Ազգային գրադարան »



NL0083828

